ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

“ 2 ” նոյեմբերի 2012թ

№ 138-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19 հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թ. մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի ա/ ենթակետով, համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 24-ի N ԴԴ/02.1/9206-12 գրավոր առաջարկության, մարզի բնակչությանը մատուցվող մասնագիտական բժշկական և խորհրդատվական օգնության ապահովման, ծառայությունների կանոնակարգման, ՀՀ առողջապահության նախարարության համապատասխան ոլորտի մասնագետների հետ համագործակցության, ինչպես նաև բժշկական օգնության որակի բարելավման նպատակով, որոշում եմ.

1. Հաստատել մարզի առողջապահության համակարգի գլխավոր մասնագետների աշխատանքների կազմակերպման կանոնակարգը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել մարզի հիմնական մասնագիտությունների գծով գլխավոր մասնագետների անվանական կազմը՝ համաձայն N 2 հավելվածի:
3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանը՝ ապահովել սույն որոշմամբ հաստատված կանոնակարգից բխող գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2012թ. նոյեմբերի 2
ք. Կապան